




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ ԺԴ.

1881

ՏԱՐԻ ԺԴ. ՓԵՏՐՎԱՐ 28.

ԱՊԱՀԻՍԱՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ ապաշխարութեան սրբարար խորհուրդը վերջին տա-
րուս հետզհետէ իբրեւ մի դառն դեղ կարծես զգուելի է եղել հոգեով-
հիւանդներին, որ չեն ախորժում մինչեւ անգամ լսել անունը, և
նոյն իսկ յօղուածիս խորագիրը պիտի խրանեցնէ շատերին բնաւ չը-
կարդալ, և զուցէ հետաքրքիրները միայն աչքի տակով անցկացնեն,
և այն էլ ոչ թէ օգուտ քաղելու, այլ միմիայն իւրեանց հետաքրք-
րութեան համար:

Ամեն ազգ ունեցել է և ունի իւր հոգեւոր և մարմնաւոր կառա-
ւարութիւններն առանձին կամ միացած, և ամեն կառավարութիւ-
նն ունի պատժական և վարձատրական օրէնքներ. վասն զի մարդիկ
սխալական բնաւորութիւն ունենալով ենթարկում են օրինաց, քա-
ղաքականապէս և կրօնապէս. նոքա միայն վարձատրուումն՝ որոնք
սակաւ և փոքր սխալմունքներ են ունեցել: Չկայ մարդ առանց սխա-
լանաց. բարի և առաքինի նա է միայն, որ ծանաչում է իւր սխալը,
ցաւում և աշխատում է կրկին չզործել, պահելով իւր հաստատուն
առաջադրութիւնն ու ուխտը, ինչպէս ամեն կենդանին երթարկում
է զանազան տկարութեան և ախտերի, կարօտ է բժշկական դեղերի
կրկին փողջանալու համար, և չկայ մի կենդանի, որ ենթակայ չլինի

տկարութեան և չկարօտի խնամոց և պահպանութեան. վայրենի կենդանիքն անգամ իւրեանց սեռի օգնութեանն են դիմում, երբ կորցնում են իւրեանց առողջութիւնը:

Մարդն իբրեւ զերազոյն արարած ունի զերազոյն առաքինութիւն, զերազոյն մոլութիւն և զերազոյն բժշկական արհեստ. ինչպէս նիւթապէս՝ նոյն և բարոյապէս. ունի մի կառավարութիւն, որ բժշկի և վերաբուժի պաշտօն ստանձնելով՝ աշխատում է, առողջապահական կանոններ է դնում և պահպանում է իբրեւ խնամատար հայր, բնական օրինաց վերայ հիմնում է ընկերշահական օրէնքներ, և նորա դէմ կամայ և ակամայ մեղանշողներին պատժական օրէնքներ, և պահպանողներին ևս վարձատրական օրէնքներ, շարունակ մեղանշողներին և կամաւ մեծ ու քրէական յանցաւորներին մարդկութեան ընկերութիւնից դուրս անում իբրեւ նեխալ և փտեալ անդամ կտրելով և ի բաց դնելով, թէ և աջ ձեռքից կամ աջքից՝ աւելի սիրելի և պիտանի էլ լինի, (Մատթ. Ե. 29, 30), որպէս զի առողջ անդամներն ևս նոյն ախտով չվարակեն: Մարդկան բարոյապէս հիւանդութեան միակ օգտակար դեղն է ապաշխարութիւնը, որի նախընթացն է զիղջ և խոստովանութիւն, թէ և զտեսում են հակառակ քարոզողներ, ժողովրդին ապստամբութեան յորդորողներ, չընդունել զղջումն և ապաշխարութիւն: Այո՛ կան խնաստակներ առաջադրուող զիմակի տակ ծածկւած, եկեղեցւոյ օրինաց լուծն իսկապա խորտակելու նշնք նպաստող ապանքապէսներէ կոյր գործիչներ, որ աշխատում են անկրօնութիւն կամ սանձարձակ անհամեստութիւն տարածել և ընդհանրացնել:

Վրիստոս ինքը սահմանեց ապաշխարութեան խորհուրդն, ասելով՝ «ապաշխարեցէք, վասն զի մօտեցել է երկնքի արքայութիւնն»: (Մատթ. Գ. 17: Մարկ. Ե. 15): «Եթէ չապաշխարէք, ամէնքդ ևս պիտի կորչիք»: (Գ. Գ. 3-5): «նոյնպէս և նորա Առաքեալները նոյնը քարոզեցին և հաստատեցին Վրիստոսի եկեղեցին, իբրեւ հմուտ և ճարտար բժիշկ հոգւոյ, առաջարկեցին առողջապահական կանոն և ստատանայի տուած խոր վերքերի սպեղանի ընդունել ապաշխարութիւնը, ասելով թէ՝ «ապաշխարեցէք և յգարձէք ձեր մեղքերն ջնջելու, որ տիրոջ երեսից զան ձեր հանգստեան ժամանակներ»: (Գ. Գ. 9. 19, 20: Ժ. 30: Ժ. 18: Բ. 37, 38: Ժ. 18: Ե. 31: Բ. 22):

Եւ որովհետեւ Աստուած իւր օրէնքը իւր ընտրեալ մարդկանց ձեռք տուաւ, ուստի նոյն օրինաց դէմ մեղանշողը դիմում է Ակեղեցւոյ ընտրած պաշտօնէին, իրրեւ հմուտ բժիշկի յայտնել խոստովանել իւր յանցանքն ու օրինազանցութիւնը և նորա միջնորդութեամբ ընդունելով ապաշխարութեան առողջարար դեղը ստանալ յԱստուծոյ քառութիւն, վասն զի Ակեղեցւոյ պաշտօնեայք թէ օրինաց վերայ հսկելու պաշտօն ստանձնած են Յիսուսի հրամանաւ և թէ միջնորդելու, կապելու և արձակելու երկրի վերայ: (Մատթ. ԺԲ. 18: Յով. Ի. 22, 23):

Մեղուցեան առանց ուրիշի հարկադրութեանը, ինքն խկապէս դարչելով մեղքից զղջալու է իւր դործի վերայ, որով մեղանշել է ընդդէմ Աստուծոյ, նորա պատուիրանաց, փնտսել է հանրութեան, ընկերին և իւր անձին (հոգւոյն), հաստատ առաջադրելով, ուխտելով այլ ևս չյամառել մեղաց մէջ, չչարունակիլ, այլ այնուհետեւ իրրեւ ճշմարիտ Քրիստոնեայ անարատութեամբ ապրել աշխարհիս մէջ և կրել յօժարութեամբ փրկական և սրբարար ապաշխարութիւնը, իւր մարմինը կարեօք և ցանկութեամբ խաչ հանելով (Գաղատ. Ե. 24) ժուժկալութեամբ, պահօք, աղօթիւք, արտաւօք, և այլն նահատակութիւններով, ինչպէս Գալիթ (Բ. Թագ. ԺԲ. 13), Մանասէ՛ (Բ. Մնաց. ԼԳ. 12, 13), Նինուէացիք՝ (Յովհ. Գ. 5—8: Մատթ. ԺԲ. 41), Պետրոս առաքեալ՝ (Մատթ. Ի. Զ. 75), Ջաքէոս՝ (Գլ. Ի. ԺԹ. 8), Քրիստոսի աջակողմեան աւագակն՝ (Գլ. Ի. ԻԳ. 40, 41): Եհա ապաշխարութեան համառօտ պատկերն, որի հաստատութեան համար Ս. Գրոց մէջ հազարաւոր վկայութիւններ և օրինակներ կան, յօդուածս չերկարացնելու և ընթերցողներին չձանձրացնելու համար միայն զըլխահամարները նշանակեցի: Յայտ. Բ. 5, 16, 21, 22: Գ. 3: Մատթ. Թ. 13: Գ. 2, 8: Ի. Զ. 75: ԻԷ. 3—5: Մատթ. Զ. 12: Գլ. Ի. ԺԵ. 7, 10, 18—21: Բ. Տէֆ. Բ. 25, 26: Հռով. Բ. 4: Եբր. Զ. 6: Յայտ. Թ. 20, 21: Ժ. Զ. 9: Բ. Մնաց. Է. 14: Զ. 26, 27: Յով. Գ. 9, 10: Գլ. Ի. ԺԶ. 40: Գ. Թագ. Բ. 33, 34: և այլն և այլն:

Եզգային և տիրող կառավարութեան օրէնքով Հայ եկեղեցին ունի իւր վարչական մարմինը և Հոգեւոր բարձրագոյն Ատեանը, — բոլոր եկեղեցական պաշտօնէից վերայ իրաւաստ իւր վարձատրական

և պատժական կանոններով՝ օրէնքներով, ուստի եկեղեցականք իւրեանց հրապարակաւ զեղծմանց և օրինազանցութեանց պատասխանատու են Հոգեւոր բարձրագոյն Ատենին, պարտաւորելով հրապարակաւ խոստովանել իւրեանց հրապարակական օրինազանցութիւնները և հրապարակաւ կրել ապաշխարութիւն։ Վայց դժբաղդաբար ներկայ դարուս սկզբից հետզհետէ հայ եկեղեցւոյ այս փրկարար խորհուրդը գրեթէ ըստ օրինի և ըստ արժանւոյն չէր գործադրուի նախնեաց ճանապարհաւ Հայաստանի շատ տեղերում, եկեղեցականներից ոմանք, որ սովորել էին ծանր բեռներ դնել ժողովրդի ուսին և իրանք մատով անգամ չչարժել, չէին յօժարում Վատնի հոգեւոր ժողովոյ խոստովանել իւրեանց յանցանքները և առանց խղճահարելու կամ մեղք համարելու աշխատում էին ուրանալ իւրեանց մեղքը—յանցանքը, և կրկին չմեղանչելու զղջական և հաստատ առաջադրութիւններ անել, և յօժարութեամբ յանձնառու լինել Հոգեւոր բարձրագոյն Ատենի սահմանած կամ կարգադրած ապաշխարութիւնները կրել, աշխատում էին զանազան միջոցներով, պատճառանօք արդարանալ, և երբ չէին յաջողում ապաշխարութիւնից—պատժից ազատուել, յամառութեամբ նախապատիւ էին համարում թողուլ իւրեանց սուրբ պաշտօնը և գնալ իւրեանց ազգակցաց կամ մերձաւորաց տանը վեր ընկնել իւրեանց բոլոր կեանքում, առանց մտաբերելու թէ ինքեանք երբեմն վէտ էին ժողովրդին զգուշացնել մեղքից, և աղ էին դարձել Հոգւոյն սրբոյ շնորհիւ, բայց իւրեանց զեղծմունքով և օրինազանցութեամբ կորցնելով իւրեանց համն, այլ ևս ուրիշ բանի չին պէտք գալի, այլ միայն դուրս գլուել և կոխան լինել, բայց ներկայ Վ. և Հ. Հայրապետը ինչպէս ի մօտոյ տեսնում ենք և հաւատում ենք որ Հայ եկեղեցւոյ առաքելական կանոնաց և նախնական աւանդութեանց խիստ նախանձախնդիր լինելով, ամենայն աշխատութեամբք և ճգամբք ջանում է թէ իւր խնամոց յանձնուած Հօտի բարեկարգութեան և թէ եկեղեցականաց համար նախնական առաքելապիւր աւանդական և մինչ ներկայ դարուս սկիզբներ գործադրւած կանոնները ճշտիւ գործադրելու, կամայականութիւնները, զեղծումները բառնալու և եկեղեցին նոյն ուղղութեան մէջ պահելու, ցանկանալով ցանկացաւ և ցանկանում է իւր բոլոր որդւոց մանաւանդ եկեղեցականաց ուղղութիւնը, որից ծնում է անշուշտ իւր Հօտի ամբողջութեան

Թիւնն ու միութիւնը, ըստ այնմ՝ և բարեոք ապագայի յոյս, ուստի տասն և հինգ տարուց ի վեր (իւր զահակալութեան օրից) ապաշխարութեան սպեղանին ներկայացնելով՝ հոգեւոր հիւանդներին, հրաւիրում է գալ զղջմամբ խոստովանել, հաստատ առաջադրութեամբ ուխտել կրկին չմեղանշել, ապաշխարութեան փրկարար դիպով բժշկուել, կրկին ի փարախ Ս. Ալեկզեցւոյ մասնել, ստանալ իւրեանց անձանց վերայ մաքուր աղն, և այնու թէ իւրեանց հոգիները փրկել և թէ բարի օրինակ լինել ամբողջ ժողովրդին, և միանգամայն բառնալ չայ եկեղեցականաց նախատինքր, ուրեմն թող խելամախ և աճապարին հոգեով հիւանդները, զիտնալով որ մեր Վ. և Հ. չայրապետը իբրեւ զթած հայր և սրտացաւ բժիշկ սիրով կրնդունի և կրնդղրկէ իւր երբեմն հեռացած՝ կորած և «ԱՆՅՐ ՄԵՂԱՆՅԱՆ» զոչող որդիներին, նոցա ընդ առաջ ելնելով՝ վէրքերին յարմարաւոր սպեղանի՝ զնելով՝ կրկին անգամ կ'յանձնէ նորանց որդիական ժառանգութիւնն ու իրաւունքը, ապաշխարութեան քաղցր լծով և թեթեւ բեռնով բժշկելով նոցա վէրքերը, որ եթէ առ ամօթոյ ծածուկ մնան՝ անշուշտ բոլոր մարմինը պիտի ծարակեն և մահացնեն:

Այն թերցողն անշուշտ կրկնայէ մեզ հետ թէ, այո՛, չայ եկեղեցականք ոմանք արդէն իւրեանց զեղծմունքով անհամ աղ են դարձել և այլոց ևս նախատանաց պատճառ թէ օտարաց և թէ մեր ազգայնոց առաջ, ուստի իւրեանց պատիւը վերանորոգելու, համով աղ դառնալու, և ազգի միութեան օգնելու միակ ճարն ու հնարն է կատարեալ զղջումով ապաշխարութեան զիրկը դիմելն ու փրկուելը, իւրեանց չար օրինակաւ գայթակղածներին կրկին ուղղութեան մէջ բերել, քաջ միտ առնելով որ քահանայական պատիւը հրեշտակաց շուռեց Մատուած, վասն զի անմեղ են, այլ՝ մարդկան տուեց, որ սխալական են և միանգամայն թողութեան մեծայոյս:

Օրինազանցներէից ոմանք, թերեւս այն պատճառաւ չեն կամենում խոստովանել իւրեանց յանցանքն և ըստ այնմ՝ կրել եկեղեցւոյ սահմանած ապաշխարութիւնն, որպէս զի իւրեանց անցեալ վարուց և պաշտօնավարութեանց վերայ ստուեր և բիծ չի ձգեն և նիւթական վարձատրութիւնից չղրկեն, ուստի աշխատում են զանազան միջոցներով արդարանալու փորձեր անել, իւրեանց հրապարակական զեղծմունքն ու օրինազանցութիւնը, որով շատերի գայթակղութեան պատճառ են եղել, իբրեւ օրինաւորութիւն համարել, երբեմն զբրդ-

ուելով ժողովրդին Հոգեւոր բարձրագոյն Ատենի որոշած պատժոյ — ապաշխարութեան դէմ, իրենմն բարեկամաց միջնորդութեան զիմե-
րով և այլն և այլն, վախենում են աշխարհի առժամանակեայ արձա-
նադրութեան մէջ մեղաւոր և ապաշխարող նշանակելուց, չեն վա-
խենում երբէք յաւիտեանական կենաց դպրութիւնից զրկելուց:
Բայց ոչինչ է մտորական մօտ ամօթ կրելն, այլ այն է, մեծ ամօթ՝ որ
տիեզերական հրապարակի մէջ է լինում, որ այժմ աշխատում են
թաղուցանել, չխոստովանել ապաշխարութեան երկիւղից, անխոր՝
մեծ դատաւորի առաջ բաց յայտնի հրապարակի մէջ պիտի կրելի,
ուր անկարելի է ծածկել, կամ բոտ այնմ չարածել: Այսան զի
չկայ մի փոքր յանցանք, որ առանց պատժի մնայ, եթէ առանց ա-
պաշխարութեան է մնացել, ինչպէս չկայ մի փոքր տկարութիւն կամ
վերք, որ մահուան պատճառ չլինի, եթէ առանց բժշկական դեղի կամ
խնամատարութեան մնայ: Ծածուկ վերքը ապականում և մահաց-
նում է մարմինը, իսկ անապաշաւ մեղքն սպանում է և մարմինը և
հոգին յաւիտեանս յաւիտենից:

Աստի իբրեւ վերջաբան յօդուածիս, հրաւիրում եմ բարեմիտ
ընթերցողիս մանաւանդ Հայ եկեղեցականաց ուշադրութիւնը դէպի
այս միակ ճարն ու փրկութիւնը, դէպի անկեղծ խոստովանութիւն,
կատարեալ զղջումն և կամաւոր ապաշխարութիւն. եթէ արդարեւ
Հայ եկեղեցւոյ ուղղափառ և հարազատ որդի են, պարտաւոր են
նախանձախնդիր լինել Հայ եկեղեցւոյ առաքելական և նախնական
կարգադրութեան, հրապարակական օրինազանցութիւնների վերայ
զղջալ, հրապարակաւ խոստովանել, հրապարակաւ կրել Հոգեւոր
բարձրագոյն Ատենի որոշած ապաշխարութիւնն, այնու կրկին ար-
դարանալ՝ Աստուծոյ և Հայ եկեղեցւոյ որդի դառնալ, հեռուել մեր
նախնեաց ուղիղ ճանապարհին և այն եկեղեցականաց, որ այս տասն
և հինգ տարւայ ընթացքում սնոտի պատկառանք մի կողմ գնելով
շատ տեղերից (ուր կարծես մոռացւած էր գործադրութիւնն) զիմե-
ցին բարձրագոյն Հոգեւոր Ատենին, խոստովանելով իւրեանց յան-
ցանքն. Բայց զոչելով ընդունելին ապաշխարութեան փրկարար
դեղն, փրկեցան հոգեւոր հիւանդութիւնից և բարի օրինակ դարձան
ժողովրդին դէպի ուղղութիւն, բայց տարարազդարար տակաւին կան
այնպիսի եկեղեցականք ոմանք, որ յոռի կամապաշտութեամբ և յի-
մար սնափառութեամբ ոչ զղջացան, ոչ խոստովանեցան և ոչ ա-

սլաշխարհցին և ոչ իսկ մտադրեցան վերստին մեղք չզործելու, այլ շարունակեցին, զինքեանս և ժողովրդին խաբելով՝ յամառեալ փառացին զուրկ հոգեոր փրկութիւնից, առանց մտաբերելոյ իւրեանց վախճանի:

Եւ այս ևս պէտքէ լաւ միտ առնել որ եկեղեցական և քաղաքական դատաստանի մէջ մեծ տարբերութիւն կայ՝ քաղաքական դատաստանի առաջ, երբ յանցաւորն խոստովանի իւր մեղքն, հետեանքն է վրէժխնդրութիւն, սպաժի, բանտ, աքսոր, տանջանք և մահ ըստ աստիճանի յանցանաց, իսկ հոգեոր Եաննի միջ երբ մեղաւորը խոստովանի անկեղծ, զղջայ և սիրով յանձն առնու ապաշխարութիւն, և վերստին չկրկնելու հաստատ առաջադրութեամբ ուխտէ, անշուտ կփրկւի, վասն զի Աստուծոյ ողորմութեան դուռը միշտ բաց է Թեոֆիլոսի և ապաշխարութեան դիմողին, միմայն անապաշաւ և անզեղ յանցաւորի դէմ փակ է, մանաւանդ անզեղ իկեղեցականաց՝ որ տիրոջ կամք զիտցող ծառաներ են. երբ հակառակ տիրոջ կամաց են դործում, ծածկում են իւրեանց մեղքն ժողովրդի առաջ արդար՝ ընտիր և սուրբ երեւելու նպատակաւ, որոց փրկութիւն չկայ ոչ աստ և ոչ հանդերձեալի միջ: Չկայ այնպիսի մեղք, որ խոստովանութեամբ և առաջադրութեամբ այլեւս չմեղանչելոյ՝ չարդարանայ, (Եղե. ԺԴ. 6: ԺԲ. 30, 31): Միայն անզեղ իւրեանց և անապաշաւն է, որ չէ արդարանում, կորչում է հոգեով և մարմնով յաւիտեանական կորստեամբ, վասն զի ապաշխարութեան արտասուքն աւազան է, լուանում է մեղաց բազմութիւնը, որ յետ մկրտութեան սրբաբար խորհրդոյն զործել է: Ուրեմն շատ սխալում են այն եկեղեցականքը, որ աշխարհային սիրոյ կամ մարդկային զանազան ակնկալութեանց համար թէ իւրեանց հոգեոց կորստեան պատճառ են լինում և թէ այն ժողովրդին, որոց դէտ և հովիւ են կարգուել, բայց իւրեանց չար օրինակաւ նոցա զայթակողութեան պատճառ են եղել: Բայց քոյս ևս պարտէ միտ առնել որ ամամայ խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը կատարեալ սիրոյ նշան չէ և փրկութեան չէ հասնում, կան օրինակներ՝ Յուդայ Ամոնեան՝ (Մատթ. ԻԷ. 3—5), Սաուղ Աիսեան՝ (Ե. Թագ. ԺԵ. 24—30), Եքար Քարմեան՝ (Յեռ. Ի. 20, 21):

Ս. ԳԼԵԼԷ.